Արձանագրություն 2

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 12.03.2019թ. ժամը 11:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Է. Պողոսյան – ՀՀ ՖՆ ԳԿՎ սպասարկման բաժնի պետ-վարչության պետի տեղակալ
Ա. Մարտիրոսյան – ՀՀ ՖՆ ԳԿՎ վարչատնտեսական բաժնի պետ
Ա. Գրիգորյան – ՀՀ ՖՆ ԳԿՎ սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ
Կ. Սիրունյան - ՀՀ ՖՆ ԳԿՎ սպասարկման բաժնի տնտեսվար

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան - ՀՀ ՖՆ գնումների գործընթացի կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում էր՝

Հանձնաժողովի նախագահ

Մ. Սարգսյան - ՀՀ ՖՆ գործերի կառավարման վարչության պետ

1. Տեղեկություններ հայտերի բացման մասին

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 11:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին

1.1 ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը	Տվյալները
«ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 00057219, հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան 76/3, էլ հասցե՝ info@elcomp.am
«ՏԵԽՆՈ ՍԻԹԻ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 05540532, էլ հասցե՝ artem.mikaelyan.14@mail.ru
«Ա/Ձ Սեյրան Սևոյան»	

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին

Հանձնաժողովը ընդունեց ի գիտություն, որ

1. «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 4-ը և հավելված 4.1-ը չեն համապատասխանում՝ հավելված 4.1-ով ներկայացված գնային առաջարկների հանրագումարը չի համապատասխանում հավելված 4-ով ներկայացված գնային առաջարկին, միաժամանակ հավելված 4.1-ով պահանջվող ծառայությունների գումարները ներկայացվել են 1 միավորի համար, այնինչ հրավերով պահանջվել է ամբողջ ծառայության արժեքը:
2. www.armeps.am համակարգում առկա չէ «Ա/Ձ Սեյրան Սևոյան»-ի կողմից կցված որևէ փաստաթուղթ:
3. «ՏԵԽՆՈ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը ներկայացված են սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/9 ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից առաջարկած գները ներկայացվում են հավելված 1-ում

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՏԵԽՆՈ ՍԻԹԻ» ՍՊԸ-ին,
2. «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ի և «Ա/Ձ Սեյրան Սևոյան»-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել անբավարար և մերժել,
3. Հարցում կատարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ «ՏԵԽՆՈ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/9 ծածկագրով ընթացակարգի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել սույն թվականի մարտի 18-ին ժամը 11:30-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝ _____ Է. Պողոսյան

_____ Ա. Մարտիրոսյան

_____ Ա. Գրիգորյան

_____ Կ. Սիրունյան

Գնումները համակարգող՝ _____ Ա. Աղաբաբյան

Հավելված 1

Հ/Հ	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները (ՀՀ դրամ)								
		«ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ			«ՏԵԽՆՈ ՍԻԹԻ» ՍՊԸ			«Ա/Ձ Սեյրան Սևոյան»		
		Արժեք	ԱԱՀ	Առաջարկված գին	Արժեք	ԱԱՀ	Առաջարկված գին	Արժեք	ԱԱՀ	Առաջարկված գին
1	հակահրդեհային սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ (նախահաշվային գին՝ 1 000 000 ՀՀ դրամ)	833 333	166 667	1 000 000	777 000		777 000			